35. ԿԻԿՈ

Կէղնի, չէղնի, Կիկո անունով մարթ մը կէղնի։ Ինք շատ հարուստ կէղնի։ Լուսուն օր տնեն կէրթա, կօլորտի քաղքի մեջ, ինչ օր ուր աչք տեսնա, կառնի, կուտա։

Քիչ ժամանակ կմնա, ուր մալ կթմի։ Օր մը կիգա ու կնկան կըսա.— Ես կէլնիմ կէրթամ ուրիշ քաղաք աշխատիմ։

Կիկոն կդրա եռսուն ղուռուշ ուր ջեպ, կէլնի քաղքեն։ Ուր հետ կտանի չորս հատ կաթա։

Շատ ու քիչ ճամբախ կէրթա, կտեսնա ընդհեն էրկու մարթ կիգան։

— Կիկո,— կըսին,— բարի լուս քըզի։

Կիկոն կըսե.— Ասու խեր ու բարին։

Մարթիկ կհարցուն, կըսին.— Դո՞ր կէրթաս։

Կըսա.— Կէրթամ քաղքներ աշխատիմ։

Մարթիկ կըսին.— Մենք լա կիգանք։

Կիկոն կըսա.— Էլնինք ախբեր, էրթանք։

Իրեք կէղնին ախբեր, կընկնին ճամբախ։ Ուրանց ճամբախ շատ հեռուն կէղնի, էրկու մարթու մոտ հաց չէղնի։ Կիկոն ուր շալակ կհարձկա, կհանա կաթեք, կիտա ուր ընկերտաց։

Քիչ մը տեղ կէրթան։ Մեկ ընկերոջ ծոց փաղարլամա կէղնի, չի տա Կիկո, կխանչա զուր մեկէլ ընկեր, կնստին կուտին։

Կիկոն առչևանց կէրթա։ Էրկու ընկեր իրարու կըսին.— Կիկո մոտ փարա շատ կա, էրթանք բռնենք սպանինք։

Մեկ ընկեր կըսա.— Ջսպանինք, կտրինք զուր էրկու օտներ, տանենք թալինք բլի մեջ։

Էրկուս ուրանց խոսքեր կէնին մեկ՝ կէլնին կընկնին Կիկո ետև, կլարին զԿիկոն բռնին, թևեր կկապին, զչոքեր կկտրին, կթալին բլի մեջ. կաշին Կիկո ծոց, եռսուն զուռուշ փարա կգտնան, կէլնին կընկնին Ճամբաի։

Շատ ու քիչ տեղ կէրթան, քաղքի մը ռաստ կիգան։ Մեկ կէղնի խաղարած, մեկ կէղնի մշակ։ Ուրանց գործ չաճողվի։ Կէլնեն հ՝ոկցի, կէրթան ուրիշ վոլատ մը։

Կիկոն բլի մեջ շատ կտանջվի, կտրքտրքա։ Վաճառական մը էնտիեն գիգա, կտեսնա՝ ծեն մա կիգա։ Կճամբցու զուր մշկներ, կէրթան զԿիկոն կգտնան, կբռնին զԿիկոն, կառնին կիգան։ Վաճառական Կիկոն կդրա ծիու վրեն, կառնի կէրթա ուր ախշար։ Վաճառական զԿիկոն կտանի հեքիմի մոտ։ Հեքիմ կտեղա՝ կսաղցու։

Վաճառական զԿիկոն կբերա ուր տուն։ Կիկոն շատ խորոտ կէղնի։

Կմնա ժամանակ մը։ Վաճառականի կնիկ աչք կթալա Կիկոն։ Կիկոն շատ խեղճ մարթ մը լա կէղնի։

Օր մը վաճառական կէլնի կէրթա ուրիշ քաղաք մը աշխատելու։ Կիկոն կէրթա տուն։ Վաճառականի կնիկ կբռնա Կիկոի յախեն։ Ինչ կէղնա՝ չարա չէղնի, Կիկոն կփախնի դուրս։ Կիկոն էլ տուն չի դա։

Կմնա ժամանակ մը։ Վաճառական կդառնա կիգա ուր տուն։ Կիշկա՝ Կիկոն տուն չէ։ Կհարցու ուր կնկաց, կըսա.—Ու՞ր ա Կիկոն։

Կնիկ կըսա.— Կիկոն աչք թալեց իս, էներ իմ դուրս։

Վաճառական շատ կհերսոտի, կբռնա, կկանչա բալթաջիք, կըսա.— զԿիկոն սպանեք։

Ուրիշ մարթ մը էն դիեն կիգա, զԿիկոն կազատա։

Կիկոն հ՝ոկցի կէլնի, կէրթա ուրիշ քաղաք մը։ Ինք կաշխատի, շատ կհարստանա, կկարգվի։

Կմնա ժամանակ մը։ Կտեսնա, ընդիեն ուր էրկու ընկեր քոռ ու փոշման կիգան Կիկո քաղաք։ Քաղքի մեջ կօլորտին՝ կիգան Կիկո տուն։

Կիկոն կճանչնա զուր ընկերտանք։

Կնկան կըսա.— Թունդիր վառա, տաշտ մա կաթա եփա։

Կբերա ոչխար մա, խորվա կիշու, ուր ընկերներ կպատվա։ Ընկերներ իրարու կըսին.— Իտա մարթ կմնի էն մարթ, օր ուր չոքեր կտրեցինք, թալեցինք բլի մեջ։

Իրեք օր Կիկոն կպահա։ Իրեք օր կթմի, շալակ մը կաթա կդրա ուր կնկա պառեկ, կնկան կըսա.— Տանիս զէտ մարթիկ քաղքից հանիս՝ իգաս։

Կնկան կըսա.— Չէղնի ուրանց հետ զրուցես։

Քաղքեն կէլնին դուրս։ Կնիկ շալակ կաթեն կուտա ուրանց, ուրանց կըսա.— Ըտ իմ մարթ օր ծեր հետ բարեկամ էղեր ա, ըտի ինչ աղեկութեն ի, կէնի։

Մարթիկ կըսին.— Թըխ մեր մեչ ու քու մարթուն՝ աստված դատաստան էնա։

Հեզ մը լա կնիկ կիշկա՝ գետին կպատռի, էրկու մարթ կէրթան մեչ, գետին կիգա իրար։ Կնիկ կմալուլի, կիգա տուն։

Մարթ կհարցու.— Ջէղնի՞ զրուցեցիր ուրանց հետ։

Կըսա.— Բան իմ բերնեն օր էլավ, ըսեցի՝ ինչ աղեկութեն իք էնի իմ մարթուն, գետին պատռավ՝ էրկու մարթ գացին դետնի տակ։

Կիկոն շատ կհերսոտի ուր կնկա վրեն, չարա չէղնի։

Դառնանք Կիկո առշին կնկա վրեն։

Կիկո կնիկ իշկեց ճամբախ՝ Կիկոն չի գա։ Էլավ խափեց մարթ մը, ըսեց.— Կառնեմ զբըզի, գիշեր չիգաս տուն, ցերեկ մինակ իգաս։

Մարթ ըսեց.— Թըխ էղնի։

Կիկո կնիկ էլավ ուրիշ մարթ մը լա խափեց, ըսեց.—Կառնեմ զբըզի։

Մարթ ըսեց.— Թըխ էղնի։

— Ապա գիշեր մինակ իգաս, ցերեկ չիգաս։

Մարթ խայիլ էղավ։

Ըդ էրկու մարթ իրարուց խաբար չունեն։

Ըն մեկ օր ցերեկվան մարթ կէրթա, քաղքի մեջ գողութեն կէնա։ Կբռնին զէտ մարթ հընչ իրկուն չեն թողի։ Իրկուն օր կէղնի՝ ըզմարթ կտփին, կէնին դուրս։ Մարթ իրկուն կիգա ուր տուն։ Կտեսնա մարթ մը հ'ոդի կա։ Կըսա.—Տու հ'որի՞ն ես էկե հ'ոդի։

Մարթ կըսա.— Իդա իմ տունն ա, իդա լա իմ կնիկն ա։

Ըդ հաղ էրկու մարթ կծեծին զիրար։

Էն կըսա՝ իմ կնիկն ա։ Էն կըսա՝ իմ կնիկն ա։

Կէլնին կէրթան խազու մոտ շարիաթ։

Ուրանց գլխու գալած խաղուն կըսին։ Խազին չորս օր կմտածա, ինչ կէնա՝ չկըրնա հանա։ Էրկու մարթ կդառնան կիգան։ Իրարու կըսին.— Վիր լեպ օր շատ էղավ, կնիկ ընտորն ա։

Իրարու կըսեն.— Թըխ էղնի։

Կէլնին կիգան ճամբախ։ Ցերեկվան մարթ գիշերվան մարթուն կըսա.—Դու ընկի իմ էտև, էրթանք քաղքի մեչ։

Ցերեկվան մարթ կտեսնա՝ հարուստ մարթ մա գնաց շուկեն։ Կընկնի մարթու էտև։ Գիշերվա մարթ լա կընկնի ցերեկվան մարթու էտև։ Կտեսնա՝ վաճառական առավ փեշկիր մը հավկիթ։ Ցերեկվան մարթ կվազնի շուկեն, կառնի փեշկիր մա սոխ, կըլնա ուր ծոց, կիգա։ Կընկնի վաճառականի էտև, հավկիթ մը կվերու, սոխ մա կդրա ուր տեղ։ Հընչի վա-

Ճառական կէրթա ուր տուն՝ հավկիթներ հ՚ըմեն կգողնա, սոխեր կըլնա հավկիթի տեղ։ Վաճառական կիշկա՝ հավկիթներ տարցած ին սոխ։ Վաճառական կշիվարի։ Կառնի սոխեր, կէրթա դուքընտարի մոտ, կըսա.— Դու զիս խափեցիր, հավկիթի տեղ սոխ ես տվի, փոխա սոխեր։

Էլմա կըլնա հավկիթ։

Կիգա ճամբախ, էլման կգողնա։

Իրեք անգամ կգողնա զհավկիթներ, հ՚ոկցի էտ էրկու մարթ կթողին, կէրթան։

Ցերեկվան մարթ կէրթա շուկից շաղգամ մը կգնա։ Կծակա շաղգամ, թել մը կկախա շաղգմից, կառնի կիգա։ Կտեսնա հարուստ մարթ մա, օսկի սահաթ մա կախուկ վզեն։ Կգողնա սահաթ, շաղգամ կդրա մարթու ջեպ։ Հ՚ոկցի կթողին կէրթան։

Ըդ հաղ գիշերվան մարթ կըսա ցերեկվան մարթուն.—Քու լեպ թմավ, իդ հաղ իմ հետ արի։

Գիշերվան մարթ կէլնի կէրթա, կգնա եռսուն հատ տախտակ։ Կէրթա թագավորի բերթի առեջ։ Կշիկա նարտվան, կէլնի թագավորի խըզինի մոտ, կպատրվտի։ Մութ կիտա։ Կիշկա թագավոր՝ ուր վեզիրք կմժլին։

Թագավոր վեզիրին կըսա.— Իդա դախ մի քնի։

Փշու մա կմնա, վեզիր կքնի։ Գիշերվան մարթ գողտուկ կէրթա, վեզիրի տեղ կնստի, կդողնա խազ մա, կիտա ցերեկվան մարթուն, կըսա.— Դու զէտի էփա, ես կմժլիմ թագավորի հետ։

Թագավոր գիշերվան մարթ գինա վեզիրն ա։

Թագավորին կըսա.— Հին տարեն մարթ մա կէղնի. ուրեն կէղնի կնիկ մա։ Ինք հարուստ կէղնի։ Ուր հարստութեն կթմի։ Կէլնի կէրթա ուրիշ քաղաք, ուր մոտ կէղնի եռսուն ղուռուշ փարա։ Էրկու մարթ կիգա ուրեն ռաստ։ Կէղնին ընկեր, կէրթան հեռուն քաղաք։ Էտ մարթու կնիկ կմնա ուր էրեսի վրեն։ Գինա ուր իրիկ մեռեր ա, կէլնի կխափա էրկու մարթ, մեկ-մեկուց խաբար չէղնին։ Մեկ՝ գիշեր կէրթա, ցերեկ կիգա, մեկ՝ ցերեկ կէրթա, գիշեր կիգա։ Օր մա ըտ էրկու մարթ կհամդին իրար։ Էն կըսա. էդա իմ կնիկն ա, էն կըսա. էդա իմ կնիկն ա։ Կծեծին զիրար, կէլնին կէրթան խաղու մոտ, խազին չկրնա ուրանց դավին իստկա։ Իրարու կըսին. «Վիր լեպ օր շատ էղավ, կնիկ ընտորն ա»։ Ցերեկվան մարթ կտեսնա՝ վաճառական մա կէրթա շուկեն, հավկիթ կգնա։ Ցերեկվան մարթ կէրթա փեշկիր մա սոխ կգնա բերա, կընկնի վաճառականի էտև, հավկիթներ կգողնա, սոխեր կդրա տեղ։ Իրեք անգամ էտմալ կգողնա զհավկիթներ։ Հեղ մը լա կէրթա շաղգամ մը կգնա, թել կթալա՝ շաղգամտեն, կէրթա հարուստ մարթու մը կուշտ կկանի, հարուստ մարթու օսկի սահաթ կգողնա, շաղգամ կդրա տեղ։ Ադոր փաստ էդ կէղնի։ Ըպա գիշերվան գող կէրթա եռսուն հատ տախտակ կգընա, կբերա թագավորի

բերդի առեշ նարտվան կշիկա, կէլնի, թագավորի մոտ գողտուկ կպատրվտի։ Թագավոր, վեզիր կզրուցին, վեզիր կքնի։ Գիշերվան գող կէրթա վեզիրի տեղ։ Խազ մա կգողնա, կիտա՝ ցերեկվան ընկեր կէփա, կմժլցու, զթագավոր կքնցու։ Կէլնի կճղա ըզթագավորի խազինեն, թագավորի փարեն կտանի։ Թագավոր դինա ուր վեզիրն ա, ուր հետ կզրուցա։ Թագավոր ապրած, ըտ կնիկ գիշերվան մարթուն կէ՞ղնի, յա՞ն ցերեկվան։

Թագավոր կըսա.— Գիշերվան մարթուն կէղնի։

Լուսմթին թագավոր քնուց կէլնի, կիշքա՝ ուր բերդ ճղուկ ա, ուր խազինեն տարած ա, ուր խազ էփած, հ՚ոդի կերած ա։ Թագավոր կշիվարի։ Լուսուն կէլնի կկանչա զտալալ, տալալ կբոռա, կըսա.—Ինչ խազար մարթ մա կա, քոմին՝ իկան թագավորի առեշ։

Քաղաք քազքընավ, կնիկ ու ճիժ կժոզվին զիրար, կիգան։ Թագավոր կբանա ժամու տուռ, հ՚ըմեն կըլնա մեչ ժամուն, կըսա.—Թըխ աղոթին, իմ փարեն բալքիմ ա էլնի։

Հ՚ըմեն կազոթին։ Գիշերվան գող խայիմ կզարկա ուր սրտին, կազոթա։ Թագավոր կմտնի ժամ, կիշքա՝ հ՚ըմեն ուշիկ կազոթին, ըդ մարթ խայիմ կզարկա ուր սրտին ու կազոթա։

Թագավոր կկանչա չալատչիք, թեր կկապա, ժողովրդին կըսա.— Գացեք ձեր տներ, ես իմ գող գտա։

Մարթն նոր կէրթա կառնե ուր կնիկն, քաշվի, կանի մեկ կողմ։

Էնղոնք հասան ուրանց սրտի մուրազին, դուք լե հասնեք ձըր։